

# ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Երևանի տոնի առթիվ

21.10.2018



Միրելի հայրենակիցներ, հայաստանաբնակ և աշխարհասփյուռ հայեր,

Լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեզ Հայոց բոլոր ժամանակների ամենամեծ ու ամենահին մայրաքաղաքի՝ Երևանի 2800-ամյակի առթիվ:

Բոլորիս է հայտնի, որ շատ քիչ մայրաքաղաքներ են արժանացել բազմադարյան հարուստ պատմություն ունենալու պատվին, որն այսօր ուսումնասիրում և հպարտորեն ներկայացնում ենք ամբողջ աշխարհին:

Մեր քաղաքային իշխանության, երևանցիների և յուրաքանչյուր հայի խնդիրն է պահպանել և զարգացնել մեր քաղաքը՝ որպես ազգային զարթոնքի խորհրդանիշ, և սերունդների մեջ սեր սերմանել մայրաքաղաքի հանդեպ:

Ես լիահույս եմ, որ քաղաքային իշխանությունները նոր ու հեղափոխական ուղիներ կգտնեն լուծելու մայրաքաղաքի առջև ծառայած բոլոր խնդիրները՝ համահունչ 21-րդ դարի պահանջներին:

Կրկին շնորհավորելով բոլորիս մեր սիրելի մայրաքաղաքի տարեդարձի կապակցությամբ՝ Երևանին մաղթում եմ կայուն զարգացում և լուսավոր գալիք, քաղաքապետին՝ արդյունավետ աշխատանքային տարիներ և հաջողություններ քաղաքի շենացման գործում, իսկ երևանցիներին՝ տոնական տրամադրություն և արևշատություն:

Շնորհավոր տոնդ, համայն հայության տուն Երևան: